



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունիսի 2019 թվականի N 1217

«ԷԼՄԻՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՓՆՅԱ ՓՈՂՈՅԻ ԹԻՎ 20 ՀԱՄՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳԱԶԱԼՅԱԿԱՅԱՆ ԿԱՌՈՒՑԵԼԻՍ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլմիրա Սարգսյան» ՍՊԸ-ի տնօրեն Էլմիրա Սարգսյանի գրությունը, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 07.06.2019 թվականին տրված զեկուցագիրը, Վանաձոր համայնքի ավագանու 2016 թվականի հունիսի 07-ի «Համայնքում հանրային բաց լուսամների եվ (կամ) քննարկումների կազմակերպման եվ անցկացման կարգը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 75-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 33-Ն որոշմամբ հաստատված կարգը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշմամբ՝ որոշում եմ.

1. «Էլմիրա Սարգսյան» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Վանաձոր քաղաքի Առափնյա փողոցի թիվ 20 հասցեում գտնվող հողամասում գազալցակայան կառուցելիս շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացների վերաբերյալ կազմակերպել հանրային բաց լուսամներ և (կամ) քննարկումներ՝ 2019 թվականի հուլիսի 1-ից մինչև հուլիսի 16-ն ընկած ժամանակահատվածում:
2. Համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային կայք էջում տեղադրել հանրային բաց լուսամների և (կամ) քննարկումների հրավեր, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:
3. Հանրային բաց լուսամների և (կամ) քննարկումների օր նշանակել 2019 թվականի հուլիսի 15-ը:
4. «Էլմիրա Սարգսյան» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Վանաձոր քաղաքի Առափնյա փողոցի թիվ 20 հասցեում գտնվող հողամասում գազալցակայան կառուցելիս շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացների վերաբերյալ հանրային բաց լուսամների և (կամ) քննարկումների վարման համար համայնքի ղեկավարի ներկայացուցիչ նշանակել ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի պաշտոնակատար, գլխավոր ճարտարապետ Սուրեն Աբովյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

Ճիշտ է՝

